ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, գործավարություն, հեռ. 596-125

№ 13/539 «12» 07 2024 թ.

«Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ
(ՀՎՀՀ 03521257)
ՀՀ Կոտայքի մարզ քաղաք Աբովյան
2-րդ փողոց տուն 20:
էլ. հասցե՝ ashot.gharagyozyan65@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ ՆԳՆ և «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի միջև 18 ապրիլի 2024թ.-ին կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՀՆԴՁ/2024/Հ-13-3 ծածկագրով հանդերձանքի ձեռքբերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և 06.05.2024թ.-ին կնքված նույն ծածկագրով համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) շրջանակներում «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ն 17.06.2024թ.-ին մատակարարել է 675 (վեց հարյուր յոթանասունհինգ) զույգ ամենօրյա կոշկեղեն և 450 (չորս հարյուր հիսուն) զույգ կիսաճտքավոր կոշիկներ, որոնք չեն համապատասխանում տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ 26.06.24թ. «Սիստեմէքս» ՍՊԸ ՓԼ տրված N 4-20240626-6 փորձարկման արձանագրության մեջ նշված չէ, թէ ի՞նչ նյութից է պատրաստված կիսաճտքավոր կոշիկների արտաքին ներբանը, իսկ փորձարկվող նմուշների բնութագիրը և նշանագիրը բաժնում նշված է, որ արտաքին ներբանը՝ պոլիուռետանային հումքից է, ինչպես նաև նշված չէ, թէ կիսաճտքավոր կոշիկը ունի արդյո՞ք մետաղական սուպինատոր: Կիսաճտքավոր կոշիկի և ամենօրյա կոշկեղենի հանովի-դնովի ներդիրները պետք է պատրաստված լինի բնական կաշվի և պոլիուռետանային հումքի համադրությունից, որի ամրացման եղանակը միաձույլ է, այլ

ոչ սոսնձման եղանակով կապակցված, ինչպես ներկայացված է «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի կողմից մատակարարված խմբաքանակում: Ամենօրյա կոշկեղենի արտաքին ներբանի միացման եղանակը վերնամասին ըստ տեխնիկական բնութագրի պետք է լինի միաձույլ՝ այն պետք է միաձուլվի առաջամասի, միջնամասի և հետևամասի կաշվե եզրերին, այլ ոչ թե սոսնձվի սոսնձի միջոցով, ինչը տեսանելի է նույնիսկ պարզ ակնադիտական զննմամբ: Ըստ տեխնիկական բնութագրի՝ կիսաճտքավոր կոշիկի քթամասը և կրնկամասը կոշտ են և ունեն լրացուցիչ կոշտություն ապահովող պինգ-պոնգ տեսակի թերմոպլաստե նյութից ներդիրներ՝ հարվածներից և դեֆորմացիայից ապահովելու համար, որոնք լրացուցիչ երեսպատված են միկրոֆիբրայի և պոլիվինիլխլորիդի նյութով, ինչը կապահովի լրացուցիչ պաշտպանություն մեխանիկական վնասվածքներից և քերծվածքներից: Օգտագործված նյութը պինգ-պոնգ տեսակի չէ և երեսապատված չէ միկրոֆիբրայի և պոլիվինիլխլորիդի նյութով:

Համաձայն պայմանագրի 2-րդ կետի դրույթների՝ «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին առաջարկվել է 10-օրյա ժամկետում շտկել անհամապատասխանությունները և մատակարարված ապրանքատեսակները համապատասխանեցնել տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին: Անհամապատասխանությունները չեն շտկվել ժամանակին:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը: Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ/և մատակարարը խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ՆԳՆ-ն միակողմանի լուծում է ՀՀ ՆԳՆ և «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՀՆԴՁ/2024/Հ-13-3 ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Համաձայն Պայմանագրի 6.3 կետի՝ Պայմանագրի N1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: Տվյալ դեպքում «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի տուգանքը կազմում է 410 000 /չորս հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ: «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-

ին տրվում է 10 օրացուցային օր սահմանված տուգանքը ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին վճարելու համար: Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

ՀՀ ՆԳՆ կողմից «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի ներկայացված բանկային երաշխիքները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ՓԲԸ երաշխիքով սահմանված գումարներ՝ 13 612 000 / տասներեք միլիոն վեց հարյուր տասներկու հազար/ ՀՀ դրամ պայմանագրի ապահովման և 20 418 750 /քսան միլիոն չորս հարյուր տասնութ հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ որակավորման ապահովման գումարը ՀՀ ՖՆ գործառնական վարչության համապատասխանաբար N900008000664 և N900008000698 հաշվեհամարներին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ընկերության տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

<< 12 >> ——07—— 2024թ.

ք.Երևան

Կատարող՝ Հ. Ասատրյան
Հեռ. 010-59-66-32